

25.728

Հաստատված է
Անդրկովկ. ժողկոմխորհի կողմից,
1928 թ. նոյեմբերի 22-ին:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ՎԱՐՁԱԿԱՆԱԿԱՆ
ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

334
Բ-78

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԲՆԱԿԿՈՈՊ ՄԻՈՒԹՅԱՆ

1934 թ.



334
F-76

Հաստատված է Անդրիւմ. Ժողկոմխորհի կողմից
1928 թ. նոյեմբերի 22-ին:

**ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ՎԱՐՁԱԿԱՆԱԿԱՆ
ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ,
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒ-
ԹՅՈՒՆԸ.

1. Բնակարանա-վարձակալական կոոպերատիվ ըն-
կերությունը, վորն անվանվում է
հիմնվում է իր անդամների բնակարանային պայման-
ները բարելավելու նպատակով՝ քաղաքի
. տնտեսությունում, կապվելով
վերցնելու միջոցով, պահելով նրան բնակության հա-
մար պիտանի դրության մեջ և իր անդամներին այդ
տնտեսության մեջ բնակության և այլ նպատակները
համար բնակարան հատկացնելով:

2. Սույն կանոնադրության հոդ. 1-ինում մատ-
նանշված նպատակները իրագործելու համար, ընկե-
րությունն իր կանոնադրության տոմարադրման ուրիշ,
վայելում է իրավական անձի բոլոր իրավունքները և
մասնավորապես նրան տրվում է իրավունք.

ա) վարձով վերցնել քաղաքայնացված այն տնա-

Պետհրատի տպարան, Յերեան

Սրբ. Ա. Հախվերդյան

տիրութիւնները, վորոնց մեջ ապրում են ընկերութ-
յան անդամները, մինչև տասնյերկու տարի ժամա-
նակով, պայմանագիրն առավելութիւններով նորո-
գելու իրավունքով:

բ) ոգտվել վարձով վերցրած տնատիրութիւն յեն-
թակա բոլոր բնակելի և վոչ բնակելի տարածութիւն-
ներէց, հատկացնելով այդպիսիները առաջին հերթին
իր անդամներին, վերջիններին բավարարելուց հետո,
մնացած ազատ բնակարանները տալ վարձով:

գ) կնքել փոխառութիւններ պետական ու կոոպե-
րատիվ հիմնարկներում:

դ) ընկերութիւն և նրա անդամների կարիքների
համար ձեռք բերել և պատրաստել շինարարական
նյութեր, վառելիք և տան ու բնակարանային սարք ու
կարքի վերաբերող իրեր:

յե) կազմակերպել իր անդամների և նրանց ըն-
տանիքների անդամների համար ոժտնդակիչ ձեռ-
նարկներ, ինչպես ճաշարաններ, լվացքատներ և այլն:

զ) մասնակցել բնակկոոպ միութիւն կազմակեր-
պութիւն և անդամագրվել նրան:

ե) ունենալ կնիք ընկերութիւն անունով:

3. Ընկերութիւնը պատասխանատու չէ իր պար-
տավորութիւնների համար ամբողջ գույքով:

Ընկերութիւն անդամները պատասխանատու չեն
նրա պարտքերի համար, միմիայն իրենց փայերի չա-
փով: Ընկերութիւն պարտավորութիւնների վերա-

բերյալ ընդհանուր ժողովի վորոշմամբ, կարող ե-
ռահմանվել անդամների լրացուցիչ պատասխանաոր-
վութիւն, վոչ ավելի քան փայի հնգապատիկը:

4. Ընկերութիւն հարարերութիւնները տեղական
տնտեսութիւն բաժնի հետ,
վորոշվում և նրանց միջև կնքված վարձակալական
պայմանագրով, տվյալ տնատիրութիւն համար:

Ընկերութիւնը պարտավոր ե- ֆադիտրհրդի մար-
միներին տալ հնարավորութիւն հսկելու ընկերու-
թիւն տեղային տնտեսութիւն բաժ-
նի մեջ կնքված պայմանագրի հետ համաձայն, իր
վերցրած պարտականութիւնների կատարման և
նույնպես ընկերութիւն կողմից տնատիրութիւն յեն-
թակա բնակելի տարածութիւն ուղիղ ոգտագործման
վրա:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԻ ՅԵՎ ՆՐԱ ԱՆԳԱՄՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

5. Ընկերութիւն անդամ կարող են լինել միայն
այն քաղաքացիները, վորոնք ոգտվում են ընտրական
իրավունքից, համաձայն ՀՍՍՀ Որենագրութիւն և
Քշտապես ապրում են ընկերութիւն յենթակա տնա-
տիրութիւն մեջ:

Ծանոթութիւն.—Այն քաղաքացիները, վո-
րոնք բնակվելու յեն յեկել նույն տնատիրու-
թիւն մեջ ընկերութիւնը հիմնվելուց հետո,

եթե նրանց անկախ իրավունք չի տրված բնա-
վելի տարածութեան վերաբերյալ, համարվում
են տնտեսիւրութեան մեջ ժամանակաւոր բնակ-
ւողներ և կարող են ընկերութեան անդամ ըն-
դունվել միայն ընկերութեան իսկական անդամ-
ների նորմայի համաձայն բնակելի տարածու-
թյամբ բաւարարելուց հետո:

6. Ընկերութեան կազմող քաղաքացիների թիւը չի
կարող տվյալ տնտեսիւրութեան մեջ ապրող ընտրական
իրավունքից ուղտվող անձանց թիւի կեսից պակաս
լինել:

7. Սկզբնական շրջանում ընկերութեանը կազմը-
վում է հիմնադիրներից համաձայն հոդ. 5-րդ կետի:
Անդամների հետագա ընդունելութեանը կատարվում
է ընդհանուր ժողովի կողմից: Բնակարանային վար-
ձակալական կոոպերատիվ ընկերութեան մեջ մտնող
անդամը տալիս է ստորագրութեան ընկերութեան կա-
նոնադրութեան յենթարկվելու մասին, վճարում է
մուտքի վճար և ձեռք է բերում փայ:

8. Մուտքի փայտվճարաչափը սահմանվում է
բնակարանային վարձակալական կոոպերատիվ ընկե-
րութեան կանոնադրութեամբ: Այդ չափը սակայն չի
կարող բարձր լինել մեկ ուսուրուց՝ մուտքի վճար 20
ուսուրի փայտվճարի համար, յեթե դաշնակից հանրա-
պետութեանների համար որոնադրութեամբ չի ուս-
մանված, այլևի բարձր կամ ցածր չափ: Թույլատրե-

վում է փայտվճարը մուծել մեկ տարվա ընթացքում,
յեթե յերկրային, նահանգական, գավառական կամ
շրջանային (կամ նրանց համապատասխանող) Գործա-
դիր Կոմիտեյի կողմից չի սահմանված այլ ժամկետ:
Մեկից ավելի փայտունեցող ընկերութեան անդամը վոչ
մի դերադանցող իրավունք չի ստանում ընկերութեան
ընդունելու և բնակարանից ուղտվելու:

Մուտքի վճարը յենթակա չէ վերադարձման:

Ընկերութեան անդամի փայտվճարի վերաբեր-
մամբ իր առանձին պարտքերի ու պարտավորութեան-
ների և նույնպես նրա դեմ հարուցված անվիճելի ու
վարչական պահանջների առթիվ դանձումների պա-
հանջ տեղի չի ունենում:

9. Տնտեսիւրութեան վարձակալական ժամկետի
սահմաններում՝ ընկերութեան անդամները մշտական
քնակութեան իրավունք ունեն ընկերութեան ընդհա-
նուր ժողովի կողմից վորոշված բնակարանում, վորի
տարածութեան չափը պետք է համապատասխանի
նորմայի չափին, վորոնք հաստատված են ՀՍՍՀ գոր-
ծող որոնադրութեան և հրապարակված են ի դար-
գացումն նրա նահանգային և գա-
վառային Գործադիր Կոմիտեյի վորոշումներով:

10. Բնակարանա-վարձակալական ընկերութեան ա-
մեն մի անդամ իրավունք ունի դուրս գալու ընկերու-
թեան կազմից, այդ մասին հայտարարութեան տալով
վարչութեանը: Ընկերութեան անդամները, վորոնք

զրկվում են ընտրական իրավունքից, կամ դադարում են տվյալ տնտեսություն մեջ ապրելուց, դուրս են մնում ընկերության կազմից: Այն անդամները, վորոնք չեն յենթարկվում կանոնադրության և ընդհանուր ժողովի վորոշումներին, չեն կատարում ընկերության վերաբերյալ ունեցած իրենց պարտավորությունները, կամ թե դործում են ի վնաս նրա՝ կարող են ընդհանուր ժողովի վորոշմամբ հեռացվել ընկերության կազմից:

Ընկերության կազմից անդամի հեռացումը կատարվում է ընդհանուր ժողովի վորոշմամբ և կապված է հեռացվողին՝ ընկերության տնտեսությունից դատական կարգով վտարելու հետ:

Անդամի հեռացման վերաբերյալ ընդհանուր ժողովի վորոշման դեմ կարելի չե բողոքել ժող. դատարանին. վորոշումը անորինական լինելու վերաբերյալ հայց ներկայացնելու միջոցով:

11. Բնակարանա-վարձակալական ընկերության կողմից հեռացվող կամ վտարվող անդամին վերադարձվում է նրա բոլոր փայերը՝ հաշվետվությունը ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո, այն չըջանառության ժամանակաշրջանի համար, վորի ընթացքում անդամը հեռացվել է ընկերության կողմից բայց վոչ ուշ քան ընկերության հետ իր բոլոր հաշիվները վերջացնելուց և ընկերության կողմից հեռացվող անդամին հառնող

քաժին վնասը վճարելուց հետո: Հեռացման որը հաշվում է չըջանառության ժամանակաշրջանի վերջին որը, վորի ընթացքում անդամը դուրս է մնացել ընկերության կազմից:

12. Ընկերության անդամի մահվան դեպքում, փայերի իրավունքը անցնում է իր ժառանգորդներին. ընտրական ձայնի իրավունքը ունեցող ժառանգները, ընդհանուր ժողովի վորոշման համաձայն ընդունվում են ընկերության անդամներ և ոգտվում են ժառանգած բնակարանից, զրկված ժառանգների հետ հաշվհարդար կատարվում է համաձայն կանոնադրության 11-րդ հոդ.:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԳՆՈՒԽՆԵՐԸ.

13. Ընկերության դրամադուլաները ստորաբաժանվում են՝ 1)ին—հիմնական 2) —փայական 3) —մասնագիտականի:

14. Հիմնական դրամադուլաները կադում են՝ 1) մուտքի վճարից, 2) ոգուտի հատկացումների ընդհանուր ժողովի կողմից վորոշված չափով, 3) հիմնական դրամադուլի համար ստացած տոկոսներից, 4) այլ պատահական մուտքի գումարներից:

Հիմնական դրամադուլի ծառայում է ընկերության գործառնային ծախսերի և գործառնությունից առաջացած վնասները ծածկելու համար:

15. Փայական դրամադուլի կադմվում է ընկերու-

նելին, նախորդը վորոշված տեղերում հայտարարու-
թյուն փակցնելու միջոցով:

Ընդհանուր ժողովը հրավիրվում և համարվում և
կայացած, յեթե ներկա յեն առնվազն բոլոր անդամ-
ների թվի կեսից վոչ պակաս:

Ընդհանուր ժողովի յեկած անդամների քչու-
թյան պատճառով ժողովը համարվում և չկայացած և
վոչ ուշ՝ քան յերեք որվա ընթացքում ու վոչ չուտ՝
քան մյուս որը հրավիրվում և 2-րդ ժողովը, վորը
համարվում և որինական, անկախ ներկա յեղողների
թվից, վորի մասին վարչությունը պարտավոր և զգու-
շացնել ժողովի հրավիրման հայտարարության հետ
միասին:

Հրավիրված 2-րդ ժողովի քննության և վորոշ-
ման յենթակա յե այն հարցերը, վորոնք մտցված են
յեղել չկայացած ժողովի որակարգի մեջ:

Ընդհանուր ժողովներում խնդիրները վորոշվում
են ներկա յեղող անդամների ձայների պարզ մեծա-
մասնությամբ՝ ա) կանոնադրության փոփոխման և
լրացման, բ) ընկերության դործերի անդամի լրացու-
ցիչ պարտավորություն սահմանելու, գ) անդամների
հեռացման, դ) վարչության և վերստուգիչ հանձնա-
ժողովի անդամների վաղաժամ հեռացման, յե) նոր-
նոր անատիրություններ վարձով վերցնելու և ուրիշ
ընկերության հետ միացնելու: Ընկերությունը լու-
ծարքի յենթարկելու խնդիրները, վորոշելու համար

պահանջվում և ժողովին ներկա լինել ընկերության
անդամների յերկու-յերրորդականից վոչ պակասը,
քստ վորում այդ խնդիրները վճռում են ներկա յեղող-
ների յերկու-յերրորդի ձայների մեծամասնությամբ:
Ձայների հավասարության դեպքում պարզ մե-
ծամասնությամբ, վճռվող խնդիրների ժամանակ դե-
րալիչում և նախազահի ձայնը:

Ընդհանուր ժողովի կայացրած վորոշումները պար-
տադիր են ընկերության բոլոր անդամների, ինչպես
ներկա յեղողների, նույնպես և բացակայողների հա-
մար:

Ընկերության յուրաքանչյուր անդամը անկախ նը-
րա մտցրած փայերի քանակից ոգտվում և մի ձայնի
իրավունքով միայն, վորպիսին ուրիշին հանձնելը չի
թույլատրվում:

22. Ընդհանուր ժողովը ներկայանում և ընկերու-
թյան դործերը վարող բարձրագույն մարմինը և նրա
անորինության յենթակա յեն այն բոլոր դործերը,
վորոնք վարչության իրավասությունից դուրս են:
Ընդհանուր ժողովի անմիջական քննության յենթա-
կա յեն՝ ա) քննել և հաստատել վարչության դործու-
նեության ծրագիրը: Հաստիքները, ընկերության
դրամական մոնտքի և յելքի նախահաշիվը:

բ) քննել և հաստատել վարչության հաշվետվու-
թյունները, ոգուտի բաշխումը և սահմանել ընկերու-
թյան վնասների մարման կարգը:

դ) վարչության վերստուգիչ հանձնաժողովի անդամների և թեկնածուների քանակի վարչումը և նրանց անորինությունը.

դ) ընկերության մեջ նոր անդամների ընդունելությունը և հաստատումը.

յե) սահմանել ու փոփոխել մուտքի փայտվածանքների չափը և վերջինիս վճարման ժամկետը.

զ) նշանակել ընկերության վարձու մարմիններին աշխատավարձի չափը.

ե) հեռացնել պաշտոնական անձանց մինչև նրանց լիազորության ժամկետի լրանալը.

ը) հաստատել վարչության և վերստուգիչ հանձնաժողովի համար հրահանգներ.

թ) կազմակերպել ոժանդակիչ մարմիններ, սանիտարական հանձնաժողովներ և

ժ) սահմանել ընկերության պարտավորությունների վերաբերյալ անդամների լրացուցիչ պատասխանատվություն, վոչ ավել, քան նրանց փայերի հնգապատիկի սահմաններում.

ի) լուծել վարկերը և սահմանել պայմաններ նրանց կնքման համար.

լ) հաստատել կապալային պայմանագրի պայմանները, տնատիրությունների վերաբերյալ:

խ) հաստատել պայմաններ քնակարանները կողմնակի անձանց վարձով տալու վերաբերյալ.

ծ) ընդունել վորոշում հասուկ դրամադրուհներ կազմակերպելու վերաբերյալ.

դ) ընդունել վորոշում վերանորոգումներ կատարելու, սահմանել կարգ և ժամկետ նրա կատարման համար.

ճ) ընդունել վորոշում տնատիրությունները կապալով վերցնելու և ուրիշ ընկերությունների հետ միանալու (ձուլվելու վերաբերյալ).

մ) վորոշել Բնակկոոպմիության մեջ մտնելը և ընտրել իր ներկայացուցչին:

ն) հաստատել նախագիծ ընկերության անդամների միջև քնակարանների բաշխման վերաբերյալ.

հ) փոխել կամ լրացնել կանոնադրությունն ինչպես նաև հանել վորոշում ընկերության փակման ու նրա դործերը լիկվիդացիայի յենթարկելու վերաբերյալ:

Բ. վարչութուն և վերստուգիչ հանձնաժողով.

23. Ընդհանուր ժողովն ընտրում է ընկերության անդամների ընդհանուր թվից վարչություն վոչ պակաս քան յերեք անդամից և յերկու թեկնածուից, մեկ տարի ժամանակով:

24. Վարչություն իր կողմից ընտրում է նախագահ, նրա տեղակալ ու քարտուղար և աշխատանքի բաշխում է կատարում անդամների միջև:

Վարչության բոլոր վորոշումները ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ, արձանագրում են արձանագրության մեջ մտցնելով վարչության ան-

գամների հատուկ կարծիքները և ստորագրվում են վարչության անդամների կողմից: Վարչության անդամներն իրենց պարտականություններն ղանցացառության հետևանքով ընկերությանը պատճառած վնասների համար պատասխանատու չեն միատեղ, բացառությամբ վարչության այն անդամի, վորը հայտնել է իր հատուկ կարծիքը և մտցրել այն արձանագրության մեջ:

Վարչությունը պատասխանատու չէ իշխանությունների բոլոր վարչական կարգադրությունները կատարելու համար:

25. Վարչությունը վարում է ընկերության բոլոր գործերը և ներկայացնում է ընկերության, առանց հատուկ փոխանորդադիր ունենալու նրա բոլոր փոխհարաբերությունների ժամանակ հիմնարկությունների և անձանց հետ:

Մասնավորապես վարչության պարտականություններն են՝

ա) կազմել նախագծեր, նախահաշիվներ և հաշվետվություններ.

բ) վարել տնտեսությունը.

գ) հրավիրել և հեռացնել ծառայողներ, համաձայն գոյություն ունեցող կանոնների.

դ) կատարել բոլոր գնումները (սղեկա) ընկերության անունից.

յ) ունենալ ներկայացուցիչներ բոլոր դատական և վարչական հիմնարկներում.

26. Ընկերության չրջանառության տարին հաշվվում է հունվարի մեկից մինչև դեկտեմբերի 31-ը:

Յուրաքանչյուր անցած տարվա համար, վարչությունը կազմում է ընկերության գործառնությունների մասին մանրամասն տարեկան հաշիվ ու նրա չրջանառությունների հաշվեկշիռ և ներկայացնում ընդհանուր ժողովին ի հայեցողություն և ի հաստատություն:

Հաշվետվությունը պետք է պարունակի իր մեջ մանրամասնորեն հետևյալ հոդվածները՝

ա) զբաղմալիի դրությունը, հիմնական փայական և հատուկ, մատնանշելով ընկերության անդամների պատասխանատվության չափը, ըստ իրենց պարտավորության:

բ) հաշվետու ժամանակամիջոցի ընդհանուր յեւքն ու մուտքն, ընկերության բոլոր գործառնությունների համաձայն.

գ) հաշիվ ընկերության ծառայողների տրվելիք ուճիկի.

դ) հաշիվ ընկերության կանխիկ գույքի. նրան պատկանող պահեստի գույքի.

յ) հաշիվ տնտեսություն վրա կատարված ծախսերի.



դ) հաշիվ ընկերություն պարտքերի անձանց և այս վերջիններիս պարտքերը ընկերություն վրա.

ե) հաշիվ ոգուտի և վնասի.

ը) հաշիվ ոգուտի և նրա բաշխման:

27. Հաշվետվության և հաշվեկշռի ստուգման բընականային ճիշտ դասավորման նույնպես և վարչության գործունեության վրա, մշտական հսկողություն ունենալու համար, ընդհանուր ժողովն իր անդամների թվից ընտրում է վերստուգիչ հանձնաժողով յերեք անդամից բաղկացած ընկերության վարչության գործերում չպաշտոնավարող անդամներից վոչ պակաս քան մեկ տարի ժամանակով նույն հիմունքներով և նույն քանակով ընտրում են թեկնածուներ, վերստուգիչ հանձնաժողովի անդամներին փոխարինելու համար: Հանձնաժողովն իր միջից ընտրում է նախագահ և հավաքվում առնվազն ամիսը մեկ անգամ:

Գործառնային տարվա վերջում հանձնաժողովը հավաքվում է վոչ ուշ քան ընդհանուր ժողով հրավիրելուց յոթ որ առաջ. ընթացիկ տարվա հաշվետվությունն ու հաշվեկշիռը, բոլոր գրքերն ու փաստաթղթերը, նմանամապես և վարչության գործավարությունը վերստուգելու համար և ներկայացնում է վարչության իր յեղրակացությունը, վորը վերջինիս նկատողությունների հետ միասին մտցրվում է ընդհանուր ժողովը ի հաստատություն: Վերստուգիչ հանձնաժո-

ղովը տեղում վերանայում և վերստուգման յենթարկում նույնպես ամբողջ գույքը, ստուգում է ամբողջ տարվա ընթացքում կատարված գործառնությունները, նմանապես և արված ծախսերը և ընդհանրապես գործադրում է բոլոր անհրաժեշտ միջոցները, յեննելով ոգուտի և ժամանակի հարմարություն, նմանապես և ընկերության, ինչպես կատարած գործառնությունների և արած ծախսերի, նույնպես և ընկերության բոլոր շրջանառությունների և վարչության ձեռք առած միջոցների ոգտակարության տեսակետից: Նույն հանձնաժողովի նախորդ քննության ներկայացվում է նախահաշիվները և գալիք տարվա գործողությունների նախագիծը, վորոնք հանձնաժողովի յեղրակացություն հետ միասին վարչության կողմից մտցրվում է ընդհանուր ժողովը:

Վերստուգիչ հանձնաժողովի մանանչած պարտականությունների կատարման համար, վարչությունը պարտավոր է տրամադրել նրան բոլոր անհրաժեշտ նյութերը:

28. Վերստուգիչ հանձնաժողովի կողմից ընկերության գործունեության վրա ունեցած հսկողությունից անկախ, ընկերությունը յենթակա յե բնակարանային կոոպերատիվ միության ստուգման և վերահսկողությանը:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՓԱԿՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ԳՈՐԾԵՐԻ
ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ.

29. Ընկերութիւնը պետք է դադարեցնի իր գոյութիւնը՝ ա) յեթե ընկերութեան անդամների թիւը տասնից պակաս է, բ) ընդհանուր ժողովի վորոշմամբ. գ) դատարանի վորոշմամբ իր պարտավորութիւնը վճարել չկարողանալու դեպքում:

30. Կանոնադրութեան հոդ. 29 «ա» և «բ» կետերում նախատեսված դեպքերում ընդհանուր ժողովը լիկվիդացիայի գործը հանձնարարում է վարչութեանը կամ հատուկ հանձնաժողովի: Հոդ. 29 «գ» կետում մատնանշված դեպքում, դատարանն է նշանակում հաշվեհարդարներին: Լիկվիդացիայի յերկու դեպքում ել պարտատերերին բավարարելու հերթականութիւնը կատարվում է քաղ. Որ. և քաղ. դատ. Որ. կանոններով:

31. Լիկվիդացիոն հանձնաժողովն ընդունելով վարչութեան գործերը ծանուցադրերի ու հայտարարութիւնների միջոցով, հրավիրում է ընկերութեան պարտատերերի, միջոցներ ձեռք առնում նրանց լրիվ բավարարելու, սեւալիդացիայի յե յենթարկում ընկերութեան գույքը և հաշտութեան է դալիս յերրորդ անձանց հետ, ընդհանուր ժողովի կամ դատարանի կողմից մատնանշված հիմունքներով ու սահմաններով: (Հոդ. 29 կետ գ):

Լիկվիդացիոն հանձնաժողովի անդամներն ընկե-

րութեան անունից կարող են մտնել նոր պարտավորութիւնների մեջ, միայն այն դեպքում յեթե ընդհանուր ժողովի կամ դատարանի կողմից տրված է այդ առթիւ իրավունք (հոդ. 29 կետ գ):

Լիկվիդացիոն հանձնաժողովը հանձնում է տեղային տնտեսութեան բաժնի նրանից ստացած գույքը, ընդունելութեան աւտի համաձայն:

Հենվելով նրա հետ ունեցած համապատասխան պայմանագրի վրա:

Յեթե ընկերութեան գույքը չի բավականացնում նրա պարտավորութիւնները ծածկելու համար, այդ դեպքում լիկվիդացիոն հանձ. պակասը գանձում է ընկերութեան անդամներից (հոդ. 3-ում հիշված կարգով):

32. Հաշվեհարդարի վերջացման վերաբերյալ կազմած հաշվետուութիւնը հաստատելուց հետո, ընկերութեան լիկվիդացիայի մասին հայտնվում է «Բնակիչապմիութեան» բնակարանա-վարձակալական կոոպերատիւ ընկերութիւնների ցուցակամատյանում համապատասխան նշանառութեան անելու համար:

Ընկերութեան գրքերը, գործերը և փաստաթղթերը հանձնվում է «Բնակիչապմիութեան», վորը պահում է յերեք տարվա ընթացքում թույլ տալով ընկերութեան նախկին անդամներին ու նրա պարտատերերին աչքի անցկացնել այն և տալ պատճեններ, քաղվածքներ և տեղեկանքներ:





ՀՀ Ազգային գրադարան



NL0205448

584